159. ԹԱԼԱՆՈՂ ԹԱԳԱՎՈՐԻ, ԹԱԼԱՆՎԱԾ ԳՅՈՒՂԱՑՈՒ ԵՎ ԽԱԲՎԱԾ ՎԵՋԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մին թաքավորը ունրան էրկու վեզիրին նհետ տունա ա կյամ երգյիրը շոռ կյամ։ Քյինամ ա տըեանում մին հլիվուր մարթ աղումնը մըեկնած, խոխան էլ խատած, աղումնը պահում աւ թաքավորը վեզիրներեն նհետ էտ մարթին մուտանում ա, պարյոր տամ, ետնան թա՝ ա՞ հլիվուր, կյանքումըտ քանի՞ հետե յըս թըլանվալ։ էտ հլիվուրը թա՝ իրեք հետե։ Մինգյել հլիվուրն ա հըրդընում, թա՝ թաքավրիրն ապրած կենա, կյանքումըտ քանի՞ հետե յըս թըլանալ։ Թաքավրերը թա՝ էրկու հետե թալան ըմ ըրալ, պըդրաստվում ըմ մեհնետ էլ անեմ։ Մինգյել թաքավրերը հրցընում ա, թա վրեր էրկու զաղ զարկեմ, կըկարե՞ս թեփռես։ Հլիվուրն ասում ա.—Ես լիհա՞ տրա հարիփին ըմ, զարկե թեփռեմ։ Թաքավրերը թա՝ լա՞վ։ Հլիվուրեն թողում ըն տըեղ, քյինամ։

Ժամանակ ա անց կենում, թաքավրերն էտ էրկու վեզիրին զարկում ա, թա քյեցեքյ էն հլիվուրեն խոսկերքը հրցըրեքյ, գյիդնցեքյ հի՞նչ ա ասալ, եկեքյ ինձ ըսեցեքյ։

Վեզիրնեն քյինամ ըն հլիվուրեն կոշտը, հրցընում, թա էն տըռնեն վրեր եկալ ընք, թաքավրերը վրեր քեզ հրցըրալ ա, թա քանի՞ հետե յըս թըլանվալ, տու վրել ասալ ըս իրեք հետե, մեհենգյ օգում ընք գյիդանք, թա՝ մարթ կյանքումը հի՞ր ա թըլան-

վում, հի՞ թ ա թըլանում, նանան զազիրը հու՞նց ըս թըեփոում։ Հլիվուրը թա տի պենիրը ես մնչյուա չըմ ասում, ամմեն մինին հետն հազզար մանեթ պիտի տաք, վըեր ասեմ։ Դե, թաքավըերին հրամանն ա, կըկարե՞ն, վըեր կազարենվուչ։ Տուա ըն օնում հազզար մանեթ տամ, էտ հլիվուրն ասում ա.— Մարթ հիթը վըեր ախճիգյ ա մարթու տամ, էն վախտն էլ թըլանվում ա. ես իրեք ախճիգյ ըմ մարթու տուվալ, իրեք տոն ըմ նըհըտնեն տուվալ, իրեք հետն յել թըլանվալ ըմ։ Վեզիրնեն թա՝ պա թըլանելը վըե՞րն ա, տա թա՝ փողը տուվեքյ, ասեմ։ Տահանք հազզար մանեթ էլ ըն տամ, հլիվուրն ասում ա.—Մարթ էն վախտն ա թըլանում, վըեր վախտ տղա յա փըտակում։ Թաքավըերն էրկու տղա յա փտակալ, էրկու տոն ա թըլանալ, մինն էլ պիտի փըտակե, վըեր մին տոն էլ թըլանե։ Տահանք հազզար մանեթ էլ ըն տամ, հրցընում, թա՝ էն հի՞նչ զազիր ըն, վըեր թըեփոում ըս։ Հլիվուրը թա՝ էտ զազիրը տուք ըք։